«Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ

2025թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևան - 2026

Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	3
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՌ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025Թ.	6
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	7
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	8
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	9
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	10

Ընկերության գտնվելու վայրը	ՀՀ, ք. Երևան, Շիրակի 2/5
Իրավական ձևը	Փակ բաժնետիրական ընկերություն
Հիմնական գործունեության նկարագիրը	Շինանյութերի արտադրություն և վաճառք
Գլխավոր տնօրեն	Մինաս Ժամակոչյան

Նեքսիա Արմենիա ՓԲԸ
Հ: +374 (10) 229 021
Հ: +374 (77) 229 021
Հ: +374 (60) 229 021
Կոմիտաս 15/7
Սքվեր բիզնես կենտրոն 3-րդ հարկ
0012, Երևան, Հայաստան
nexia.am

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ բաժնետերերին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝ առ 31 դեկտեմբերի 2025թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների ամփոփագիրը:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ-ի առ 31 դեկտեմբերի 2025թ. ֆինանսական վիճակը և այդ ամսաթվին ավարտվող տարվա գործունեության արդյունքներն ու դրամական հոսքերը՝ Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ ՖՀՄՍ) համապատասխան:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների այս աուդիտի նկատմամբ կիրառելի անկախության և էթիկայի պահանջներին համապատասխան, և մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք համոզված ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար են ու համապատասխան, որպեսզի հիմք ապահովեն մեր կարծիքի համար:

Այլ հանգամանք

Ընկերության 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որն այդ հաշվետվությունների վերաբերյալ 2025թ. հունիսի 30-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության գործադիր ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի էական անճշտություններից (թե՛ սխալի, թե՛ խարդախության արդյունքում առաջացող) զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հնարավորություն ընձեռելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ գործադիր ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում

բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կա՛մ լուծարելու Ընկերությունը, կա՛մ դադարեցնելու դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Ընկերության բաժնետերերը պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակներն են՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացող էական անճշտություններից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի գոյություն ունեցող էական անճշտությունը: Անճշտություններ կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև՝

- նույնականացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական անճշտության ռիսկերը, այդ ռիսկերից ելնելով նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են ապահովում մեր կարծիքի համար: Խարդախությունից առաջացող էական անճշտության չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալից առաջացողինը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության համակարգի մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների ու կից բացահայտումների հիմնավորվածությունը.
- եզրահանգում ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն կապված դեպքերի կամ պայմանների հետ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ առկա է էական անորոշություն, ապա մենք պետք է մեր աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդպիսի բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում, ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են ընդհուպ մինչև մեր աուդիտորի

Նեքսիա Արմենիա ՓԲԸ
Հ: +374 (10) 229 021
Հ: +374 (77) 229 021
Հ: +374 (60) 229 021
Կոմիտաս 15/7
Սքվեր բիզնես կենտրոն 3-րդ հարկ
0012, Երևան, Հայաստան
nexia.am

դեպքում, ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են ընդհուպ մինչև մեր աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ պայմանները կարող են պատճառ հանդիսանալ, որ Ընկերությունն այլևս չհամարվի անընդհատ գործող.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները պատկերում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվի ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք Ընկերության ղեկավարությանը աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգի նշանակալի թերությունների մասին:

Սույն անկախ աուդիտորի եզրակացության համար հիմք հանդիսացած աուդիտի պատասխանատու ղեկավարն է՝

Արմինե Ասոյան

Աուդիտի մենեջեր,
որակավորված աուդիտոր,
ՀԳԳՀ՝ 2 23 0805

Արթուր Հարությունյան

Տնօրեն, որակավորված աուդիտոր,
ՀԳԳՀ՝ 2 20 0017

«Նեքսիա Արմենիա» ՓԲԸ

Երևան
30 հունիսի 2026թ.

«Նեքսիա Արմենիա»
"Нексиа Армения"
"Nexia Armenia"
01529594

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՌ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025Թ.

	Ծնթ.	31.12.2025թ.	31.12.2024թ.
Ակտիվներ		**հազ. դրամ**	**հազ. դրամ**
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	6,523,675	6,568,316
Ոչ նյութական ակտիվներ		17,173	19,412
Ոչ ընթացիկ ակտիվների գծով կանխավճարներ		-	47,774
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		-	88,295
		6,540,848	**6,723,797**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	2,119,519	1,714,445
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	1,385,172	1,227,697
Տրված փոխառություններ		79,594	24,691
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	836,925	201,612
		4,421,210	**3,168,445**
Ընդամենը ակտիվներ		**10,962,058**	**9,892,242**
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	8	3,406,800	2,980,000
Վերագնահատման պահուստ		2,012,983	2,109,244
Կուտակված շահույթ		3,357,513	1,690,852
		8,777,296	**6,780,096**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ստացված վարկեր և փոխառություններ	9	374,196	1,001,988
Հետաձգված հարկային պարտավորություն	11.2	75,736	105,894
		449,932	**1,107,882**
Ընթացիկ պարտավորություններ			
Ստացված վարկեր և փոխառություններ	9	702,156	664,093
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	801,118	897,610
Վճարվելիք շահաբաժիններ սովորական բաժնետոմսերի գծով	20	-	252,827
Շահութահարկի գծով պարտավորություն	11.1	231,556	189,734
		1,734,830	**2,004,264**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**10,962,058**	**9,892,242**

Ֆինանսական հաշվետվությունները և դրանց կից ծանոթագրությունները (էջ 10- 23) հաստատվել են ղեկավարության կողմից 30.06.2025թ. և թույլատրվել հրապարակման համար, ստորագրությամբ՝

Մինաս Ժամակոչյան
Գլխավոր Տնօրեն

Անահիտ Սիմոնյան
Գլխավոր հաշվապահի գործառույթ
իրականացնող, փորձագետ հաշվապահի
որակավորման վկայական ՓՀ 0458

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2025Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

	Ծնթ.	**2025թ.**	**2024թ.**
		հազ. դրամ	**հազ. դրամ**
Հասույթ	12	14,722,641	12,299,637
Վաճառքի ինքնարժեք	13	(8,344,406)	(7,049,189)
Համախառն շահույթ		6,378,235	5,250,448
Իրացման ծախսեր	14	(2,260,704)	(1,850,816)
Վարչական ծախսեր	15	(1,383,681)	(1,067,529)
Գործառնական և այլ ծախսեր	16	(152,803)	(191,675)
Գործառնական և այլ եկամուտներ	17	172,758	183,075
Հիմնական միջոցների օտարումից օգուտ	18	17,828	58,533
Գործառնական շահույթ		2,771,633	2,382,036
Ֆինանսական ծախսեր	19	(178,535)	(165,735)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		11,127	20,187
Շահույթ մինչև հարկումը		2,604,225	2,236,488
Շահութահարկի գծով ծախս		(483,825)	(380,261)
Զուտ շահույթ		2,120,400	1,856,227
Այլ համապարփակ արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ արդյունք		2,120,400	1,856,227

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2025Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

	Կանոնադրական կապիտալ	**Կուտակված շահույթ**	**Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ**	**Ընդամենը**
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	**2,556,000**	**988,364**	**2,205,505**	**5,749,869**
Տարվա շահույթ	-	1,856,227	-	1,856,227
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**1,856,227**	**-**	**1,856,227**
Կանոնադրական կապիտալի համալրում	424,000	-	-	**424,000**
Շահաբաժիններ	-	(1,250,000)	-	**(1,250,000)**
Վերագնահատման պահուստի փոխանցում կուտակված շահույթին	-	96,261	(96,261)	**-**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**2,980,000**	**1,690,852**	**2,109,244**	**6,780,096**
Տարվա շահույթ	-	2,120,400	-	2,120,400
Կանոնադրական կապիտալի համալրում	426,800	-	-	**426,800**
Շահաբաժիններ	-	(550,000)	-	**(550,000)**
Վերագնահատման պահուստի ամորտիզացիա	-	96,261	(96,261)	**-**
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	**426,800**	**(453,739)**	**(96,261)**	**(123,200)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	**3,406,800**	**3,357,513**	**2,012,983**	**8,777,296**

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2025Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Հազար դրամ	**2025թ.**	**2024թ.**
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Տարվա շահույթ մինչև հարկվելը	2,604,225	2,236,488
Մաշվածություն և ամորտիզացիա	710,988	610,682
Հիմնական միջոցների օտարումից (օգուտ)	(17,828)	(58,533)
Ներված պարտավորություն	-	(30,549)
Կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստի շարժ	65,286	(6,712)
Փոխհատուցելի բացակայությունների գծով դեբիտորական պարտք	28,943	32,827
Ֆինանսական ծախս	178,535	165,735
Վարկերի տոկոսների փոխհատուցումից եկամուտ	(113,632)	(88,865)
Փոխարժեքային տարբերությունից շավնաս	(11,127)	(20,187)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	**3,445,390**	**2,840,886**
Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(75,391)	(475,966)
Պաշարների փոփոխություն	(405,074)	(86,740)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(125,433)	40,627
Գործառնություններից զուտ դրամական հոսքեր	**2,839,493**	**2,318,807**
Վճարված տոկոսներ	(64,903)	(76,870)
Վճարված շահութահարկ	(472,161)	(491,210)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**2,302,429**	**1,750,727**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութ. ակտիվների ձեռքբերում, զուտ	(627,544)	(1,954,812)
Տրված ոչ ընթացիկ կանխավճարների փոփոխություն	(47,774)	256,929
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	32,615	298,535
Տրամադրված փոխառություն, զուտ	(54,902)	(14,930)
Ներդրումային գործ-ից զուտ դրամական հոսքեր	**(697,606)**	**(1,414,278)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Կապիտալի համալրում	426,800	424,000
Շահաբաժնի վճարում	(805,852)	(997,473)
Վարկեր և փոխառություններ, զուտ	(589,729)	166,782
Ֆինանսական գործ-ից զուտ դրամական միջոցներ	**(968,781)**	**(406,691)**
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**636,043**	**(70,242)**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(730)	(1,106)
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	201,612	272,960
Դրամական միջոցների մնացորդը հաշվ. ժամանակաշ-ի վերջին	**836,925**	**201,612**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

ա) Ընկերության նկարագիրը և գործունեությունը

Էֆֆեկտ Գրուպ ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 24.02.2016 թվականին:

Գրանցվել է Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների ռեգիստրում՝ 2016թ. փետրվարի 24-ին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (պետական գրանցման համարը՝ 80.120.889317, ՀՎՀՀ՝03317278):

Ընկերության ստեղծման նպատակը ինքնուրույն, իր ռիսկով տնտեսական գործունեություն իրականացնելը և այդ գործունեությամբ շահույթ ստանալն է:

Ընկերության հիմնական գործունեությունն է շինանյութերի (ներկերի, չոր շաղախների, բետոնե բլոկների, սալիկների, եզրաքարերի) արտադրությունը և վաճառքը:

2025թ. աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 454 մարդ (2024թ.՝ 433 մարդ):

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, քաղաք Երևան, Շիրակի 2/5:

բ) Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանը շարունակում է անցումային փուլ ապրել քաղաքական և տնտեսական առումներով: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանը չունի այնպիսի կայացած բիզնես և կարգավորող ենթակառուցվածքներ, որոնք բնորոշ են ավելի հասուն ազատ շուկայական տնտեսություններին: Բացի այդ, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաների ակտիվության ծավալը, ինչի հետևանքով այդ շուկաներում ձևավորված արժեքները կարող են չարտացոլել ֆինանսական գործիքների իրական արժեքները: Տնտեսության հետագա զարգացման հիմնական խոչընդոտներն են՝ տնտեսական և ինստիտուցիոնալ ցածր զարգացվածության մակարդակը, կենտրոնացված տնտեսական կառուցվածքը, տարածաշրջանային անկայունությունը և միջազգային տնտեսական ճգնաժամը:

Այն երկրների տնտեսական իրավիճակի վատթարացումը, որոնք համագործակցում են Հայաստանի Հանրապետության հետ, հանգեցրել է արտերկրից դրամական փոխանցումների պակասին, որոնցից հայկական տնտեսությունը զգալիորեն կախված է: Հանքարդյունաբերական ապրանքների միջազգային գների հետագա անկումը, ուղիղ կապիտալ ներդրումների ներգրավման հետ կապված անորոշությունները, ինչպես նաև գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության և Ընկերության ֆինանսական վիճակի վատթարացման: Սակայն, հաշվի առնելով անորոշությունների հետ կապված բազմաթիվ փոփոխականները և ենթադրությունները, Ընկերության ղեկավարությունը չի կարող հուսալիորեն գնահատել այն գումարները, որոնք կարող են ազդել Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Ընկերության ղեկավարությունը համարում է, որ ներկայիս պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ՝ Ընկերության տնտեսական կայունությունն ապահովելու համար:

Ռուսաստան-Ուկրաինա պատերազմը և դրա ազդեցությունը

Ռուսաստանի և Ուկրաինայի միջև 2022 թվականի փետրվարից սկսված պատերազմը էական ազդեցություն է ունեցել տարածաշրջանային տնտեսական միջավայրի վրա, ներառյալ՝ Հայաստանի: Որպես այդ երկրների հետ սերտ տնտեսական կապեր ունեցող երկիր՝ Հայաստանը բախվել է ինչպես ռիսկերի, այնպես էլ որոշակի հնարավորությունների:

Մասնավորապես, նկատվել են առևտրային հոսքերի, ֆինանսական փոխանցումների և միգրացիոն շարժերի զգալի փոփոխություններ: Ռուսաստանից փոխանցումների աճը և բիզնեսների տեղափոխումը դրական ազդեցություն են ունեցել կարճաժամկետ տնտեսական աճի վրա, մինչդեռ մատակարարման

շղթաների խաթարումները և աշխարհաքաղաքական անորոշությունը նոր տնտեսական և ֆինանսական ռիսկեր են առաջացրել:

Ընկերության ղեկավարությունը շարունակում է ուշադիր հետևել իրավիճակին: Չնայած երկարաժամկետ հետևանքների ամբողջական բնույթը մնում է անորոշ, հաշվետու ժամանակահատվածի դրությամբ Ընկերության ֆինանսական դիրքի և գործունեության վրա դրա ազդեցությունը էական չի եղել: Ընկերությունը պատրաստ է վերանայել իր գնահատականները՝ ելնելով ապագա զարգացումներից, որոնք կարող են անդրադառնալ ֆինանսական արդյունքների, դիրքի կամ բացահայտումների վրա:

Իրանի և Իսրայելի, ԱՄՆ-ի միջև պատերազմը և դրա ազդեցությունը

Հաշվետու ժամանակահատվածից հետո Մերձավոր Արևելքի տարածաշրջանում նկատվում է աշխարհաքաղաքական լարվածության աճ, ներառյալ ռազմական գործողությունների սրացում Իրանի և Իսրայելի, ԱՄՆ-ի, մի շարք այլ երկրների ներգրավմամբ: Նշված զարգացումները կարող են առաջացնել տնտեսական և ֆինանսական շուկաների անկայունություն ինչպես տարածաշրջանում, այնպես էլ գլոբալ մակարդակում: Այս զարգացումները կարող են ազդեցություն ունենալ էներգակիրների գների, առևտրային երթուղիների և շուկայի ընդհանուր վիճակի վրա:

Հաշվետվության հաստատման օրվա դրությամբ ընկերության գործունեության վրա ուղիղ ազդեցություն չի գրանցվել: Այնուամենայնիվ, ղեկավարության կողմից դիտարկվում են մի շարք անուղղակի ռիսկեր, այդ թվում՝

- Հումքի և էներգիայի գների տատանումներ
- Մատակարարման շղթայի հնարավոր խափանումներ
- Վաճառքի շուկաների անկայունություն
- Արտարժույթի փոխարժեքների փոփոխություններ և հնարավոր գնաճ

Տվյալ պահին նշված իրադարձությունների հնարավոր ֆինանսական ազդեցությունը հնարավոր չէ հուսալիորեն գնահատել՝ պայմանավորված իրավիճակի շարունակական զարգացումներով և անորոշության մակարդակով: Ընկերության ղեկավարությունը շարունակում է հետևել իրավիճակի զարգացմանը և գնահատել դրա հնարավոր ազդեցությունը ընկերության գործունեության, գործընկերների և մատակարարման շղթաների վրա:

2. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համաձայն:

Անընդհատության հիմունք

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքի հիման վրա, ինչը ենթադրում է, որ Ընկերության ակտիվները կիրացվեն և պարտավորությունները կմարվեն Ընկերության բնականոն գործունեության ընթացքում՝ առանց որևէ մտադրության Ընկերության գործունեությունը տեսանելի ապագայում դադարեցնելու կամ Ընկերությունը լուծարելու:

Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով: Բացառություն են կազմում իրական արժեքով չափվող ներդրումները և վերագնահատված գումարով չափվող շենքեր, շինություններ և կառուցվածքները և հողամասերը:

Չափման և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթ ՀՀ դրամն է (դրամ): Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ, ենթադրություններ և դատողություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Պաշարների զուտ իրացվելի արժեքի գնահատում

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ դիտարկում է արդյոք պաշարների զուտ իրացվելի արժեքը պակաս չէ դրանց ձեռքբերման արժեքից և նման դեպքերի հայտնաբերման դեպքում պաշարները չափում է դրանց զուտ իրացվելի արժեքով: Գնահատումները հիմնվում են հետհաշվեկշռային ժամանակահատվածի ուսումնասիրության, ինչպես նաև մոտ ապագայում շուկայում ակնկալվող փոփոխությունների վերաբերյալ Ընկերության ղեկավարության ակնկալիքների վրա:

Հիմնական միջոցների օգտակարության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակարության ժամկետները հիմնված են ղեկավարության դատողությունների վրա և ապագայում կարող են փոփոխվել (Ծան. 3): Յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածում ընկերության ղեկավարությունը վերլուծում և անհրաժեշտ դեպքում փոփոխում է գնահատականները, կապված հիմնական միջոցների մնացորդային օգտակարության ժամկետների հետ:

2.1. <u>Ստորագրումը</u>

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2026 թվականի հունիսի 30-ին Ընկերության գլխավոր տնօրեն Մինաս Ժամակոչյանի և հաշվապահական հաշվառումը վարող պատվիրակված ընկերության՝ «ՖԻՆՎԵՅՎ ՔՆՍԱԼԹ» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն՝ Անահիտ Սիմոնյանի կողմից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Հասույթ

Հասույթը ժամանակաշրջանի ընթացքում Ընկերության սովորական գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն ներհոսքն է, որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի:

Ընկերությունը ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչում է, երբ գնորդին է փոխանցվել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը, Ընկերությունը չի պահպանում ոչ կառավարման շարունակական մասնակցություն և ոչ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն, հասույթի գումարը հնարավոր է արժանահավատորեն չափել, ինչպես նաև հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն և գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 381.36 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 449.01 ՀՀ դրամ, 1 ՌԴ ռուբլին՝ 4.87 ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 396.56 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 413.89 ՀՀ դրամ, 1 ՌԴ ռուբլին՝ 3.71 ՀՀ դրամ):

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները (բացառությամբ անշարժ գույքի) սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Հիմնական միջոցների միավորի ինքնարժեքը ձեռքբերման արժեքից բացի ընդգրկում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները և հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման սկզբնապես գնահատված անխուսափելի ծախսումների գումարը:

Շենքերը, շինությունները, կառուցվածքները և հողամասերը, հետագայում չափվում են իրական արժեքով՝ որակավորված մասնագետի կողմից կատարված գնահատումների հիման վրա: Հողամասերի ու շենքերի վերագնահատումից առաջացած իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ եկամտում և կուտակվում են վերագնահատման պահուստում, բացառությամբ այն դեպքի, երբ արժեքի նվազումը գերազանցում է վերագնահատման պահուստի կրեդիտային մնացորդը (կամ նման գործարքի հակառակ տարբերակը). այս դեպքում գերազանցող մասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հողամասերի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Կառուցման ընթացքում գտնվող ակտիվների գծով մաշվածությունը սկսվում է հաշվարկվել, երբ ակտիվները ավարտուն են և պատրաստ օգտագործման:

Մնացած բոլոր հիմնական միջոցների գծով հաշվարկվում է մաշվածություն՝ դրանց հաշվեկշռային արժեքը ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում բաշխելու նպատակով:

Մաշվածության հաշվարկման համար օգտագործվում են հետևյալ օգտակար ծառայության ժամկետները

Շենքեր, շինություններ	20-40 տարի
Կառուցվածքներ	1-10 տարի
Մեքենաներ, սարքավորումներ	1-8 տարի
Տրանսպորտային միջոցներ	5-8 տարի
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	1-8 տարի
Այլ հիմնական միջոցների դասեր	1-8 տարի

Պաշարներ

Պաշարները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով, իսկ հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, փոխարկման և պաշարները ներկայիս գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Համանման բնույթ և կիրառություն ունեցող բոլոր պաշարների ինքնարժեքի որոշման համար կիրառվում է ինքնարժեքի առաջին մուտք՝ առաջին ելք (FIFO) բանաձևը:

Պահուստներ

Ընկերությունը ճանաչում է ժամկետի կամ գումարի առումով անորոշ պահուստներ: Որպես պահուստ ճանաչված գումարը պետք է իրենից ներկայացնի հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ներկա պարտավորությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:

Երբ ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն գումարի ներկա արժեքը, որը, ակնկալվում է, որ կպահանջվի այդ պարտականությունը մարելու համար: Զեղչման դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

Շահութահարկի գծով ծախս

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ հարկից:

Ընթացիկ շահութահարկը ընթացիկ ժամանակաշրջանի կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթի գծով վճարման ենթակա հարկ է:

Ընկերությունն ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթից վճարվելիք հարկի գծով ճանաչում է ընթացիկ հարկային պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարվելիք գումարը, Ընկերությունն այդ գերազանցող մասը ճանաչում է որպես ընթացիկ հարկային ակտիվ:

Ընկերությունն ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունը (ակտիվը) չափում է այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի հարկային մարմիններին (կփոխհատուցվի հարկային մարմինների կողմից)՝ կիրառելով հարկերի դրույքները և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել մինչև հաշվետու ամսաթիվը:

Ընկերությունն ընթացիկ հարկային պարտավորության կամ ընթացիկ հարկային ակտիվի փոփոխությունները ճանաչում է շահույթում կամ վնասում՝ որպես հարկի գծով ծախս:

Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները ճանաչվում են այն դեպքում, երբ ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում տարբերվում է դրա հարկային բազայից:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքերում, երբ հավանական է, որ հասանելի կլինի հարկվող շահույթը, որի դիմաց կարող է օգտագործվել տարբերությունը:

Ակտիվի կամ պարտավորության չափը որոշվում է ՝օգտագործելով հարկային դրույքաչափերը, որոնք ուժի մեջ են մտել կամ ըստ էության ուժի մեջ են մտնելու հաշվետու ամսաթվի դրությամբ, և ակնկալվում է, որ կիրառվելու են հետաձգված հարկային պարտավորությունները / (ակտիվները) մարելիս / (վերականգնել):

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները փոխհատուցվում են, երբ Ընկերությունն ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները փոխհատուցելու իրավաբանորեն կիրառելի իրավունք ունի, իսկ հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները վերաբերում են նույն հարկային մարմնի կողմից գանձվող հարկերին:

4. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Շենքեր, շինություններ, կառուցվածքներ	Հողամասեր	Մեքենաներ և սարքավորում-ներ	Տրանսպորտային միջոցներ	Անավարտ շինարարություն	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք/ վերագնահատված արժեք							
Մնացորդն առ 01.01.2024թ.	**1,769,009**	**1,842,878**	**806,117**	**1,846,010**	**125,060**	**373,240**	**6,762,314**
Ավելացումներ	130,290	4,933	43,594	748,100	750,684	290,159	1,967,760
Նվազեցումներ	-	-	(10,439)	(439,010)	-	(8,953)	(458,402)
Ներքին շարժ	223,220	-	38,988	566,536	(857,535)	28,791	-
Մնացորդն առ 31.12.2024թ.	**2,122,519**	**1,847,811**	**878,260**	**2,721,636**	**18,209**	**683,237**	**8,271,672**
Ավելացումներ	44,454	-	198,223	368,886	8,878	54,876	675,317
Նվազեցումներ	-	-	(2,024)	(74,624)	-	(66)	(76,714)
Ներքին շարժ	-	-	-	-	-	-	-
Մնացորդն առ 31.12.2025թ.	**2,166,973**	**1,847,811**	**1,074,459**	**3,015,898**	**27,087**	**738,047**	**8,870,275**
Կուտակված մաշվածություն							
Մնացորդն առ 01.01.2024թ.	**138,158**	**-**	**475,142**	**554,543**	**-**	**133,513**	**1,301,356**
Տարվա ծախս	122,245	-	158,129	264,355	-	62,211	606,940
Նվազեցումներ	-	-	(506)	(203,852)	-	(582)	(204,940)
Ներքին շարժ	-	-	-	-	-	-	-
Մնացորդն առ 31.12.2024թ.	**260,403**	**-**	**632,765**	**615,046**	**-**	**195,142**	**1,703,356**
Տարվա ծախս	136,153	-	137,481	350,378	-	82,964	706,976
Նվազեցումներ	-	-	(545)	(63,119)	-	(66)	(63,730)
Ներքին շարժ	-	-	-	-	-	-	-
Մնացորդն առ 31.12.2025թ.	**396,556**	**-**	**769,700**	**902,305**	**-**	**278,040**	**2,346,601**
Զուտ հաշվեկշռային արժեք							
Մնացորդն առ 31.12.2024թ.	**1,862,116**	**1,847,811**	**245,495**	**2,106,590**	**18,208**	**488,096**	**6,568,316**
Մնացորդն առ 31.12.2025թ.	**1,770,417**	**1,847,811**	**304,759**	**2,113,593**	**27,087**	**460,007**	**6,523,674**

Հիմնական միջոցների գծով սահմանափակումներ

Բանկային վարկերը ապահովելու նպատակով Ընկերությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունի գրավադրված 1,811,143 հազար դրամի սկզբնական արժեքով հիմնական միջոցներ:

Իրական արժեքի չափում-հիմնական միջոցների վերագնահատում

Ընկերության շենքերի, շինությունների ու հողամասերի վերագնահատված արժեքը չափվել է անկախ գնահատողի `«Վի-Էմ-Ար Փի» ՍՊԸ-ի կողմից կատարված իրական արժեքի գնահատման հիման վրա:

Հիմնական միջոցների վերագնահատումը իրականացվել է 31.12.2022թ· դրությամբ:

Շենքերի և շինությունների, հողամասերի իրական արժեքը որոշվել է գնահատման ծախսային մեթոդով:

Ընկերության անշարժ գույքը չափվում է վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է վերագնահատման ամսաթվով իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և հետագա կուտակված արժեզրկումը:

Զրո հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցներ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության լրիվ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմել է 845,769 հազ. դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 384,801 հազ. դրամ):

5. Պաշարներ

հազ. դրամ	**31.12.2025թ.**	**31.12.2024թ.**
Հումք և նյութեր	1,894,204	1,505,030
Պատրաստի արտադրանք	180,096	177,791
Ապրանքներ	30,599	26,201
Հանքարդյունահանման արտադրանք	2,211	5,423
Վառելիք	12,409	
Ընդամենը	**2,119,519**	**1,714,445**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերությունն ունի գրավադրված շրջանառության մեջ գտնվող ապրանքանյութական արժեքներ:

6. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	**31.12.2025թ.**	**31.12.2024թ.**
Առևտրական դեբիտորական պարտքեր	1,134,486	1,028,149
Հանած՝ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը	(118,915)	(59,515)
Առևտրային դեբիտորական պարտքեր (զուտ)	**1,015,571**	**968,634**
Տրված ընթացիկ կանխավճարներ	270,906	250,521
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	-	5,454
Այլ դեբիտորական պարտքեր	98,695	3,088
	1,385,172	**1,227,697**

Ստորև ներկայացված է առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստի շարժը.

հազ. դրամ	**2025**	**2024**
Մնացորդ առ 1-ը հունվարի	59,515	66,227
Պահուստին հաշվերգրումներ	59,400	(6,712)
Մնացորդ առ 31-ը դեկտեմբերի	**118,915**	**59,515**

7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	31.12.2025թ.	31.12.2024թ.
Բանկային հաշիվներ, ՀՀ դրամով	815,237	182,429
Բանկային հաշիվներ, արտարժույթով	7,731	104
Դրամարկղ	13,958	19,079
	836,925	**201,612**

8. Սեփական կապիտալ

8.1 Կանոնադրական կապիտալ

2025թ. ընկերությունը թողարկել է 853,600 հատ լրացուցիչ հասարակ բաժնետոմսեր, որոնք 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ վճարված և տեղաբաշխված են(426,800 հազ. դրամ): Բաժնետոմսերից յուրաքանչյուրը տեղաբաշխվել է 500 դրամ անվանական արժեքով:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 3,406,800 հազար դրամ, որը բաղկացած է 500 ՀՀ դրամ անվանական արժեքով 6,813,600 հատ հասարակ անվանական բաժնետոմսերից: Ընկերության մասնակիցներն են՝

Բաժնետերեր	*Բաժնետոմսերի քանակը*	*Տեսակարար կշիռը (%)*
Սամվել Բեգլարյան	4,991,880	73.3%
Արև Բեգլարյան	1,072,224	15.7%
Մինաս Ժամակոչյան	681,360	10.0%
Արմեն Բալասանյան	68,136	1.0%
	6,813,600	**100%**

8.2 Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստը առաջացել է հիմնական միջոցների (անշարժ գույք) վերագնահատման արդյունքում (ծնթ. 4): Վերագնահատման պահուստը յուրաքանչյուր տարի փոխանցվում է չբաշխված շահույթին մաշվածությանը համամասնորեն:

9. Ստացված վարկեր և փոխառություններ

*10. **Հազար դրամ***	31.12.2025թ.	31.12.2024թ.
Բանկային վարկեր՝ ՀՀ դրամով, 8.5% տոկոսադրույքով, մինչև 2027թ. մարման ժամկետով	18,724	42,581
Բանկային վարկեր՝ ԱՄՆ դոլարով, 9% տոկոսադրույքով, մինչև 2027-2029թթ. մարման ժամկետներով	191	444,580
Բանկային վարկեր՝ Եվրոյով, 8.5% տոկոսադրույքով, մինչև 2027թ. մարման ժամկետով	224	128,585
Ընդամենը	**19,139**	**615,746**

Կարճաժամկետ մաս

Հազար դրամ	31.12.2025թ.	31.12.2024թ.
Բանկային վարկեր՝ ՀՀ դրամով, 8.5% տոկոսադրույքով, մինչև 2027թ. մարման ժամկետով	27,147	27,941
Ընդամենը	**27,147**	**27,941**

Բոլոր առևտրային բանկերից ստացված վարկերը ապահովված են անշարժ գույքով, շրջանառության մեջ գտնվող ապրանքանյութական պաշարներով, ինչպես նաև Ընկերության կողմից տրամադրված երաշխավորությամբ (ծնթ. 4):

Լիզինգի գծով պարտավորություններ

Ներառված ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ՝

Հազար դրամ	**31.12.2025թ.**	**31.12.2024թ.**
- Լիզինգի գծով պարտավորությունների ընթացիկ մաս	674,955	746,529
- Լիզինգի գծով պարտավորությունների ոչ ընթացիկ մաս	355,111	275,865
	1,030,066	**1,022,394**

11. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	**2025թ.**	**2024թ.**
Առևտրային կրեդիտորական պարտքեր	253,866	495,016
Հարկեր և սոցիալական վճարներ	224,812	162,549
Արձակուրդային վճարումների գծով պահուստ	145,066	116,123
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	148,680	90,079
Ստացված կանխավճարներ	28,696	33,583
Առևտրային կրեդիտորական պարտքեր հիմնական միջոցների գծով	-	260
	801,120	**897,610**

12. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	**2025թ.**	**2024թ.**
Ընթացիկ հարկի գծով ծախս	513,983	445,801
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում	(30,158)	(65,540)
	483,825	**380,261**

Համաձայն ՀՀ Հարկային Օրենսգրքի շահութահարկի տոկոսադրույքը 2025 թվականին կազմել է 18% (2024: 18%):

11.1 Շահութահարկի գծով պարտավորություն

Հազար դրամ	**31.12.2025թ.**	**31.12.2024թ.**
Տարեսկզբի մնացորդը	**189,734**	**235,143**
Տարվա ծախս	513,983	445,801
Վճարում	(472,161)	(491,210)
Տարեվերջի մնացորդը	**231,556**	**189,734**

Շահութահարկի փաստացի (արդյունքային) տոկոսադրույքի համապատասխանեցում.

Հազար դրամ	**2025թ.**	**%**	**2024թ.**	**%**
Շահույթ՝ նախքան հարկումը	2,604,225		2,236,488	
Շահութահարկ՝ հարկի կիրառվող դրույքաչափով	468,761	18.0	402,568	18.0
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը	(2,003)	(0.1)	(3,634)	0.1
Զուտ չնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտներ)	17,067	0.7	(18,673)	(1)
	483,825	**18.6**	**380,261**	**17.0**

11.2Հետաձգված հարկային պարտավորություն

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները արտացոլված են հետևյալ հոդվածներում.

Հազար դրամ	**1 հունվարի 2025թ.**	**Ճանաչված շահույթում կամ վնասում**	**31 դեկտեմբերի 2025**
Հիմնական միջոցներ	(132,015)	12,444	(119,571)
Ոչ նյութական ակտիվներ	5	(188)	(183)
Դեբիտորական պարտքեր	10,713	10,692	21,405
Պաշարներ	-	2,001	2,001
Արձակուրդի պահուստաֆոնդ	20,902	5,210	26,112
Կրեդիտորական պարտքեր	(5,499)	-	(5,499)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	**(105,894)**	**30,158**	**(75,736)**

Հազար դրամ	**1 հունվարի 2024թ.**	**Ճանաչված շահույթում կամ վնասում**	**31 դեկտեմբերի 2024**
Հիմնական միջոցներ	(174,506)	42,491	(132,015)
Ոչ նյութական ակտիվներ	-	5	5
Դեբիտորական պարտքեր	(11,921)	22,634	10,713
Արձակուրդի պահուստաֆոնդ	14,993	5,909	20,902
Կրեդիտորական պարտքեր	-	(5,499)	(5,499)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	**(171,434)**	**65,540**	**(105,894)**

13. Հասույթ

Հազար դրամ	**2025թ.**	**2024թ.**
Արտադրանքի վաճառքից	12,824,960	11,482,707
Ծառայությունների մատուցում	978,453	571,252
Ապրանքների վաճառքից	919,228	245,678
	14,722,641	**12,299,637**

14. Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	**2025թ.**	**2024թ.**
Վաճառված արտադրանքի ինքնարժեք	7,281,169	6,433,749
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	591,446	485,119
Իրացված ապրանքների ինքնարժեք	471,792	130,321
	8,344,406	**7,049,189**

15. Իրացման ծախսեր

Հազար դրամ	**2025թ.**	**2024թ.**
Աշխատանքի վարձատրության ծախսեր	720,499	563,633
Մարկետինգի և գովազդի ծախսեր	533,262	460,032
Տրանսպորտային ծախսեր	454,742	401,248
Վառելիքի ծախսեր	245,999	218,004
Ապահովագրական և խորհրդատվական ծախսեր	46,015	48,004
Գործուղման ծախսեր	6,915	6,788
Կապ, կոմունալ և գրասենյակային ծախսեր	5,739	3,658
Մաշվածության և ամորտզացիայի ծախսեր	167,083	128,259
ՀՄ նորոգում և սպասարկում	2,601	-
Այլ ծախսեր	77,849	21,190
Ընդամենը	**2,260,704**	**1,850,816**

16. Վարչական ծախսեր

Հազար դրամ	**2025թ.**	**2024թ.**
Աշխատանքի վարձատրության ծախսեր	803,103	574,191
Հաղորդակցման, կոմունալ և գրասենյակային ծախսեր	181,821	145,275
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	172,942	155,292
Տրանսպորտային ծախսեր	74,973	86,096
Աուդիտորական և խորհրդատվական, սպասարկման ծախսեր	45,019	35,797
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	39,308	24,264
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	27,440	18,945
Բանկային ծառայության ծախսեր	2,957	4,554
Մարքեթինգի, գովազդի ծախսեր	17,238	4,198
Նորոգման և սպասարկման ծախսեր	8,437	2,327
Այլ ծախսեր	10,443	16,590
Ընդամենը	**1,383,681**	**1,067,529**

17. Գործառնական և այլ ծախսեր

Հազար դրամ	**2025թ.**	**2024թ.**
Արժեքների փչացումից, պակասորդից	23,481	64,795
Պաշարների իրացումից	18,776	42,360
Դեբիտորական պարտքի դուրս գրում	66,214	51,458
Արտարժույթի փոխարկումից ծախս	17,073	11,342
Անհատույց տրված ակտիվներ	-	2,690
Ծախսեր տույժերից, տուգանքներից	5,397	1,656

Այլ ծախսեր	21,864	17,374
Ընդամենը	**152,803**	**191,675**

18. Գործառնական և այլ եկամուտներ

Հազար դրամ	**2025թ.**	**2024թ.**
Վարկերի տոկոսների սուբսիդավորումից եկամուտ	113,632	88,865
Պաշարների վաճառքներից եկամուտներ	17,664	21,725
Վնասի փոխհատուցումից եկամուտներ	400	13,640
Վարձակալությունից եկամուտ	3,923	3,250
Արտարժույթի փոխարկումից եկամուտ	734	1,049
Այլ եկամուտներ	36,404	54,546
Ընդամենը	**172,758**	**183,075**

19. Հիմնական միջոցների օտարումից օգուտ

Հազար դրամ	**2025թ.**	**2024թ.**
Հիմնական միջոցների վաճառքից օգուտ	32,615	298,535
Հիմնական միջոցների օտարումից ծախս	(14,787)	(240,002)
Զուտ	**17,828**	**58,533**

20. Ֆինանսական ծախսեր

Հազար դրամ	**2025թ.**	**2024թ.**
Տոկոսային ծախսեր	178,535	165,735
Ընդամենը	**178,535**	**165,735**

21. Կապակցված կողմերի միջև գործարքներ

Առևտրային գործարքներ

Ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը կապակցված կողմերի հետ իրականացրել է հետևյալ առևտրային գործարքները.

Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

Հազար դրամ

	2025թ.	**2024թ.**
Աշխատավարձ և պարգևատրումներ	380,483	226,605
	380,483	**226,605**

Գործարքներ մասնակիցների հետ

Գործարքի գումար ***Հազար դրամ***	**2025թ.**	**2024թ.**
Շահաբաժինների հայտարարում	298,624	1,250,000
Ստացված փոխառություններ	37,000	-
Ստացված փոխառությունների մարում	37,000	-
Կրեդիտորական պարտքեր ապրանքների և ծառայությունների դիմաց	11,400	-
Տրված կանխավճար	10,260	-
	394,284	1,250,000

Չմարված մնացորդ ***Հազար դրամ***	**31.12.2025թ.**	**31.12.2024թ.**
Վճարվելիք շահաբաժին	20	252,827
	20	252,827

Գործարքներ կապակցված կազմակերպությունների հետ

Գործարքի գումար ***Հազար դրամ***	**2025թ.** **հազ. դրամ**	**2024թ.** **հազ. դրամ**
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում	126,912	1,184,688
Ապրանքների իրացում և ծառայությունների մատուցում	9,245	165,141
Տրված կանխավճար	270,400	-
Ստացված կանխավճար	2,903	-
	409,460	1,349,829

Չմարված մնացորդ ***Հազար դրամ***	**31.12.2025թ.**	**31.12.2024թ.**
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11,279	140,406
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	15,302	(7,129)
	26,581	**133,277**

Ընկերությունն ունի տրամադրած վարկային երաշխավորություններ իր հետ կապակցված կազմակերպություններին, որոնք 31.12.2025 և 31.12.2024թթ. դրությամբ կազմում են 3,000,000 հազար դրամ և 30 մլն ԱՄՆ դոլար:

22. Պայմանական պարտավորություններ

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերության ապրանքները, հիմնական միջոցները, բացառությամբ հողմասերի ապահովագրված են: Սակայն Ընկերությունը ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց:

Իրավական պարտավորություններ

Ընկերության ղեկավարությունը տեղյակ չէ Ընկերության դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետությունում հարկային համակարգը համեմատաբար նոր է և հատկանշական է հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ: Վերջինս հաճախ հստակ չէ, հակասական է և պահանջում է մեկնաբանություններ: Շատ դեպքերում այս կամ այն հարցում տարբեր հարկային և այլ իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկային խնդիրներն ուսումնասիրվում են հարկային մարմինների կողմից, որոնք օրենսդրությամբ լիազորված են հաշվարկել տուգանքներ և տույժեր:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը չունի լրացուցիչ հարկային պարտավորություններ և պահուստ չի ձևավորել լրացուցիչ հարկային պարտավորությունների գծով:

Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ Ընկերությունը բավարարում է ՀՀ օրենսդրությամբ ներկայացվող շրջակա միջավայրի պահպանության պահանջներին և վստահ է, որ Ընկերությունը չունի շրջակա միջավայրի հետ կապված էական ընթացիկ պարտավորություններ: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ օրենսդրությունը դեռ զարգացման փուլում է և օրենսդրության հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները կարող են ապագայում առաջացնել էական պարտավորություններ: